

ՇԱՀԵԿԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՅՑ Տ. ՊԱՐԵՏ Ծ. ՎՐԴ. ԵՐԷՑԵԱՆԻ ՀԵՏ

(Սրբոց Յակոբեանց Միաբանութեան
Կալուածոց Տեսուչ)



2014-ի տարուայ կէսերուն, հրամանաւ Ամենապատիւ Պատրիարք Տ. Նուրիհան Արք. Մանուկեանի, Սրբոց Յակոբեանց Տաճարէն ներս թէ դուրս սկսան կատարուիլ լուրջ նորոգութիւններ, որոնց անհրաժեշտութիւնը կը զգացուէր վաղուց: Այժմ կը գտնուինք նորոգութիւններու աւարտական փուլին մէջ: Այս առթիւ և այլ կալուածային հարցերու վերաբերեալ ունեցանք հետեւեալ հարցազրոյցը Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեանի հետ՝ լուսաբանելու համար հայութիւնը:

Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան Սաղիմահայ է և երկար տարիներ սպասարկած է ԱՄՆ-ի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Արեւելեան և Արեւմտեան Թեմերէն ներս:

Հարցում.- Ե՞րբ ստանձնեցիք Կալուածոց Տեսուչի պարտականութիւնը, ի՞նչ է առաքելութիւնը Ձեր ղեկավարած բաժնին:

Տ. Պարետ Ծ. Վրդ.- Պարտականութիւնս ստանձնեցի 2014-ի Յունիս 1-ին: Ինձմէ առաջ այս բաժնի պատասխանատուն էր Տ. Բագրատ Վրդ. Պորճեքեան: Մեր պարտականութիւնն է հսկել և հետեւիլ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան պատկանող կալուածներու վրայ, ինչպէս՝ վարձու տրուած յարկաբաժիններ, բնակարաններ, խանութներ, և զբաղիլ անհրաժեշտ նորոգութիւններով: Կալուածներ ունինք Երուսաղէմէն զատ Եաֆա, Ռամլէ, Բեթղեհէմ, Երիքով, Թել Ավիվ և այլուր: Այս կալուածներէն Միաբանութիւնը կը ստանայ եկամուտներ և ասոնցմով կը հոգանք մեր բազմաձախ կարիքները: Ուրեմն հարկաւոր է բժախնդիր կերպով հետեւիլ, որպէսզի օրինաւոր ու սահուն կերպով ընթանան մեր կալուածային գործառնութիւնները:

Հարցում.- Կրնայի՞ք մանրամասնել և աւելի որոշակի տուեալներ տալ այս առնչութեամբ:

Տ. Պ. Վրդ.- Երուսաղէմի և այլ սրբատեղեաց մէջ մեր Միաբանութիւնը հայութեան պատիւ բերող և հպարտութիւն պարգեւող

ներկայութիւն մըն է դարերէ ի վեր: Վանքին շրջափակէն ներս և դուրսը՝ Հայոց թաղերուն մէջ ապրող մեր հայրենակիցները ունին շարք մը առաւելութիւններ, ինչպէս օրինակ չնչին խորհրդանշական վարձ մը կը գանձուի իրենցմէ, բաղդատմամբ շուկայի գիներուն:

Բնակարանային հարցով մեր ժողովուրդը կը վայելէ բարենպաստ պայմաններ: Օրինակ, մինչ բնակարան մը դուրսը կ'արժէ 1000 տոլար, իրենք մեր մօտ կը վճարեն 100 կամ 200, կամ ալ 100 տոլար տարեկան և աւելի նուազ: Ասով հանդերձ կը թերանան իրենց պարտականութեան մէջ Վանքին հանդէպ: Հոս պէտք է ըսել որ Պատրիարքը բաւական թիով մեր վարձակալներուն, որոնց յետեւալ պարտքերը 100,000 տոլարի կը հասնէին, ներում շնորհեց, ասով հանդերձ տակաւին շատերը կը փորձեն խուսափիլ և չվճարել իրենց վարձքերը: Ճիշտ հոս է որ Վանքը ստիպուած կ'ըլլայ դիմել փաստաբաններու՝ բազմաթիւ անգամներ մեր բնակիչներուն աղաչելէ ետք:

Մեր գաղութին միակ վարժարանը՝ Սրբոց Թարգմանչացը կը գտնուի վանքին շրջափակէն ներս, նմանապէս և ակումբները, ֆութպոլի դաշտը, Կիւլպէնկեան Մատենադարանը, դարմանատունը, այլ խօսքով Հայոց Վանքը եղած է բոլորին տունը, ուստի և կ'ակնկալենք որ մեր բնակիչները հետեւին կարգ ու կանոնին և կանոնաւոր կերպով կատարեն ու չձգձգեն իրենց վճարումները, որովհետեւ մենք բազմաձախ եկեղեցական հաստատութիւն մը ըլլալով՝ ունինք մեր ծախսերը, զորս պէտք է կատարենք ժամացոյցի ճշգրտութեամբ: Կը ցաւիմ ըսելու թէ մեր բնակիչներէն ոմանք ոչ միայն ժամանակին չեն կատարել իրենց վճարումները, այլ երբեմն ալ խոչընդոտներ կը յարուցեն չվճարելու համար ...

Հարցում.- Եթէ գաղտնիք մը չէ, որքա՞ն է ձեր ծախսը:

Տ. Պ. Վրդ.- Նախ ըսեմ թէ Վանքը տարեկան նուազագոյնը մէկուկէս միլիոն տոլարի օգտակարութիւն կ'ունենայ այս գաղութին, որոնց մէջ կը մտնեն դպրոցական, առողջապահական, նորոգութեանց և այլ ծախսեր: Կեանքի սղութեան յարաճուն վերելքի պատճառով տարուէ տարի կ'աւելնան նաեւ մեր ծախսերը, հետեւաբար գանձուած վարձքերը չեն կրնար յաւիտենապէս նոյն հորիզոնականին վրայ մնալ: Յիշեցնեմ որ Ժառանգաւորաց վարժարանը բաւական ծախ-

սալից կրթական հիմնարկ մըն է, ուր կ'ուսանին աւելի քան երեսուն ժառանգաւորներ, որոնցմէ կը յուսանք հասցնել Հայաստանեայց Եկեղեցւոյ մեր ապագայ հոգեւոր սպասաւորները: Անոնք հոս կ'ուսանին, կը սնուին, ունին կենցաղային ծախսեր, կը ստանան թոշակ և այլն:

Մեր Թարգմանչաց վարժարանի ծախսերը նոյնպէս քիչ չեն, թէւ ծնողներէն կը գանձուի որոշ կրթաթոշակ:

Մեր վանքապատկան շէնքերուն, կալւածներուն և եկեղեցական կառոյցները նոյնպէս քիչ ծախսի չեն նայիր, կը նորոգենք ու նորոգած ենք Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց, Բեթղեհէմի, Եաֆայի (Ս. Նիկողայոս) սրբավայրերը:

Կը ցաւիմ ըսելու թէ ի դէմս այս բոլորին մեր ազգայիններէն, աւելի ճիշդ՝ «հարուստներէն» կամ ինքնաբաւ գաղութներէն ու ազգային բարերարներէն շատ քիչեր կ'ընեն նուիրատուութիւններ: Մենք մեր թիկունքին չունինք Վատիկանի և կամ Օրթոտոքս եկեղեցւոյ նման հզօր ու հարուստ աշխարհատարած հաստատութիւններ, հակառակ որ Սրբատեղեաց մէջ ունինք պատուաբեր ներկայութիւն մը:

Մեզ կը զարմացնէ մեր բարերարներու և բարեգործական կազմակերպութիւններու անտարբերութիւնը: Դիշդ է որ անոնք կը հոգան մեր Հայրենիքին, Արցախին և Սփիւռքի վարժարաններու հոգսերու մէկ մասը, բայց պէտք է յիշեցնենք թէ Երուսաղէմը առնուազն 15 դարերէ ի վեր եղած է և է մեր հոգեւոր հայրենիքը, որուն իրենց անհրաժեշտ հոգատարութիւնը ցոյց տուած են անցեալին հայ թագաւորներ, բարեպաշտ իշխաններ, թագուհիներ և իշխանուհիներ...: Երախտագէտ ենք 20-րդ դարու մեր ազգաշէն բարերարներէն Կիլիպէնկեաններուն, Մելգոնեան Եղբայրներուն, Ալեքս և Մարի Մանուկեաններուն և ուրիշներու, որոնք իրենց հոգատար ձեռքը չեն զլացած մեր սրբավայրերուն հանդէպ, բայց նոյնը չենք կրնար ըսել վերջին քառասուն տարիներու համար:

Հարցում.- Վերջին ամիսներուն աչքառու նորոգութիւններ կը կատարուին Սրբոց Յակոբեանց վանքին մէջ: Կրնայի՞ք լուսաբանութիւններ տալ այս մասին:

Տ. Պ. Ծ. Վրդ.- Այո, ուրախ եմ որ այս հարցումը ուղղեցիք: Բացի կարգ մը բնակարաններու և ուխտաւորաց կացարաններու նորոգութիւններէն, Ս. Յակոբեանց Տաճարի

նորոգութիւնը արդէն աւարտած է Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր նախաձեռնութեամբ: Պէտք է ըսենք թէ Ս. Յակոբի նորոգութիւնը մեր վրայ արժեց մօտ կէս միլիոն ԱՄՆ տոլար: Քանի մը հարիւր տարի կառուցային նորոգութիւններ չկատարուելու պատճառով խիստ կարիքը կը զգացուէր անոնց: Տանիքէն իջած խոնաւութիւնը սկսած էր սպառնալ հարաւային պատերու (Ս. Էջմիածին մատրան) ամրութեան: Հիմնական կառոյցներէն նորոգութեանց ենթարկուեցան Մայր Տաճարի գմբէքը, կամարները, առաստաղը, վերնատունը, հին ծեփերը հանուեցան, խոնաւութեան պատճառ եղող քարերու միջեւ ծեփերն ու խոռոչները նորոգուեցան, վերածեփուեցան, դուրսի պատերը մաքրուեցան աւազաջրով և ստացան պայծառ տեսք:

Այս ընթացքին ի յայտ եկան հաճելի յայտնաբերութիւններ, որոնց շարքին աւելի քան քսան խաչքարեր (այս մասին կարդալ Տ. Բագրատ Վրդ. Պուրճեքեանի ուշագրաւ հաղորդումը սոյն թիւին մէջ-խմբ.):

Հարցում.- Ի՞նչ պատգամ ունիք այս առթիւ, զոր կը փափաքիք հայութեան ուշադրութեան յանձնել:

Տ. Պ. Ծ. Վրդ.- Ինչպէս ըսի, մեր Պատրիարքութիւնը մեծածախս եկեղեցական ու ազգային հաստատութիւն մըն է: Մեր Սրբավայրերը հեռաւոր ու մօտաւոր անցեալին եղած են ազգային բարերարներու ուշադրութեան թիրախ, իսկ մեր սրբալոյս Պատրիարքներն ու հաւատացեալ հայութիւնը Սրբավայրերը պաշտպանած է ակռաներով: Յիշեցնենք որ մեր Պատրիարքութիւնը և վանքապատկան կալուածներէն ներս բնակութիւն հաստատած նախաեղեռնեան, յետեղեռնեան, Ա. և Բ. Համաշխարհային ու Պաղեստինի պատերազմներուն ապաստան տուած է իր անոթիկ զաւակներուն: Աշխարհի այս շրջանին մէջ չեն պակսիր քաղաքական վերիվայրումները, հետեւաբար որեւէ ժամանակ մեր Սրբավայրերն ու վանքապատկան վայրերը կրնան վտանգի ենթարկուիլ: Ուրեմն, պէտք է շէն պահել այս հինաւորաց հաստատութիւնը, հոգալ և թեթեւցնել իր նիւթական բեռը:

Հարցազրոյցը վարեց՝
Մ. Գ.

